Հայաստանի Հանրապետության ինտերնետով ծանուցման պաշտոնական կայք

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ Վիճակախաղերի, շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների լիցենզավորող հանձնաժողովի 11.07.2022թ. կայացած նիստի արձանագրությունից

11.07.2022

Տիպ՝ Լիցենզավորող մարմինների կողմից ստեղծված հանձնաժողովների ծանուցումներ
Հայտատու՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն
«Լիցենզավորման մասին» օրենք, 40-րդ հոդված, մաս 8

1. Հիմք ընդունելով «ԴԻՋԻԹԵՅՆ» ՍՊԸ (ԻՇԽ-002 լիցենզիա) կողմից 14.06.2022թ. ներկայացված գրությունը, կից փաստաթղթերը և ղեկավարվելով «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով՝ «ԴԻՋԻԹԵՅՆ» ՍՊԸ կողմից 14.06.2022թ. ներկայացված ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման և անցկացման կանոնակարգի փոփոխությանը տալ համաձայնություն:
2. Հիմք ընդունելով «Կաբարկո» ՍՊԸ (ՎԽ-024 լիցենզիա) կողմից 30.06.2022թ. ներկայացված գրությունը, կից փաստաթղթերը և ղեկավարվելով «Վիճակախաղերի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասով՝ «Կաբարկո» ՍՊԸ կողմից 30.06.2022թ. ներկայացված վիճակախաղի (տոտալիզատորի) կազմակերպման և անցկացման լրացումներին (այսուհետ՝ Կանոնակարգի լրացումներ) տալ համաձայնություն վերապահումով՝ ստորև նշված թերությունները շտկելուց հետո.
- Կանոնակարգի լրացումներում սահմանել դրույթներ, համաձայն որոնց՝ լրացվող կարգավորումները չեն տարածվի նախկինում ծագած իրավահարաբերությունների վրա, ինչպես նաև դրույթ այն մասին, համաձայն որի՝ արդեն իսկ գրանցված մասնակիցները նախապես տեղեկացված են լինելու (մինչև խաղադրույք կատարելը) վերը նշված կարգավորումների մասին:
- Կանոնակարգի լրացումների 4-րդ կետում ճշտել «3.2.4.1» պարբերության համարակալումը:
3. Հիմք ընդունելով «ՕՆԻՐԱ ՔԼԱԲ» ՍՊԸ կողմից 08.07.2022թ. ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված դիմումը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.01.2014թ «ՕՆԻՐԱ ՔԼԱԲ» ՍՊԸ տրված խաղատան կազմակերպման թիվ ԽՏ-001 լիցենզիայի գործողությունը մինչև 01.10.2022թ. կասեցնելու մասին, ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով և 6-րդ մասով՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.01.2014թ. «ՕՆԻՐԱ ՔԼԱԲ» ՍՊԸ տրված խաղատան կազմակերպման թիվ ԽՏ-001 լիցենզիայի գործողությունը կասեցնել համաձայն իր դիմումի՝ մինչև 01.10.2022թ., ընդ որում՝ լիցենզիայի գործողության կասեցման ընթացքում «ՕՆԻՐԱ ՔԼԱԲ» ՍՊԸ իրավունք չունի իրականացնել կասեցման որոշմամբ սահմանված գործունեություն, գործառույթ կամ գործողություն, բացառությամբ նրանց, որոնք ուղղված են լիցենզիայի գործողության կասեցման պատճառները վերացնելուն:

Հասցե՝ ք. Երևան , Մելիք Ադամյան 1

Հեռ.՝ 011800365, 099992243

Վեբ կայք՝ www.minfin.am

Էլ. փոստ՝ senik.vardanyan@minfin.am